

Լորուբիններ



📄 Տպել

Շատ դիտել են

Լորուբին 15/12/15

ՍՓԻՐՔԻ ՀԱՅՈՑ ԴԱՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԱԿԱՆ ԴԱՍԱԳՐԵՐԻ ԴԱՏԱՍՏՈՒՄ
Դիտումներ - 1102

Հանրագիտարան

Բերով Համիդ 2-րդ
Դիտումներ - 792

Տեսաֆիլմեր

ՀՀ-ի ձևավորման պատմությունը
Դիտումներ - 2677

Քարտեզներ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՆԱՇԽԱՐՀ
(ԲՆԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԶԱՐԿԵՏ)
Դիտումներ - 893

Յօդուածներ

ИЗ ИСТОРИИ АРМЯНО-КИТАЙСКИХ ОТНОШЕНИЙ
Դիտումներ - 777

Գրքեր

ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԻԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԱՆՑՑԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
Դիտումներ - 461

Փաստաթղթեր

ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԲԱՔՈՒ ԵՒ ԵԼԻՉԱԿԵՏԱՊՈՒՆ ԱՐԱՎԱԳՆԵՐՈՒՄ 1918-1920 ԹԹ. (Փաստաթղթերի ու նիւթերի ժողովածոյ)
Դիտումներ - 1

May	2024				
Su	Mo	Tu	We	Th	Fr
			1	2	3
5	6	7	8	9	10
12	13	14	15	16	17
19	20	21	22	23	24
26	27	28	29	30	31

Հայաստանը և տարածաշրջանը միջազգային հարթակում

Գիտաժողովներ

Մագիստրոսական ծրագրեր

Հեռաուսուցում


Լորուբիններ

Աշխատանքային շտեմարան

Յոլումներ

Գործընկերներ

Կայքի քարտեզ



«Հայկական անդրահամայնի տարածականությունը և արդի հաղորդակցական միջոցները» թեմայով գիտաժողովի շրջանակում լինելով Լիբանանում՝ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Միեր Հովհաննիսյանը և ՀՀ սփյուռքի նախարարության տեղեկատվության և հաղորդակցության վարչության պետ Վաղինակ Վարդանյանը այցելել են նաև Բեյրութի երկու հայկական դպրոցներ՝ Համազգայինի Մելանկտոն և Հայկ Արսլանեան ճեմարան և Լևոն և Սոֆիա Հակոբյան հայկական քոլեջ: Տնօրեններ Վիգեն Ավագյանի և Տիգրան Ճինպաշյանի հետ քննարկվել է դպրոցների խնդիրները՝ մասնավորապես հայագիտական առարկաների դասավանդման և ուսումնամեթոդական գրականության հարցերը: «Հայոց պատմությունը մեծ



մասամբ դասավանդվում է նախորդ դարի երկրորդ կեսին տպագրված գրքերով, որոնք, միանշանակ, շտկումների և հավելումների կարիք ունեն: Անհրաժեշտ է մեր օժանդակությունը արևմտահայերեն պատմության դասագրքերի խնդիրը լուծելու համար: Այս հարցը նույնքան հրատապ է, որքան հայոց լեզվի և գրականության դասագրքերի դեպքում», - ասաց Միեր Հովհաննիսյանը: Նրա խոսքով, այդ դասագրքերը ինչ-որ չափով պետք է «ճկուն» լինեն, քանի որ Լիբանանի հայկական դպրոցներում տարբեր ժամաքանակով է դասավանդվում հայոց պատմություն առարկան: Այդ դասագրքերը մյուս կողմից պետք է հասու լինեն լիբանանահայ աշակերտներին: Թեմայի շուրջ նաև հանդիպում է եղել Լիբանանում



գործող «Վահե Մեթեյան» տպարանի տնօրեն Հակոբ Հավաթյանի հետ: Տնօրենը նշել է, որ Հայաստանում գրքերը կազմելու դեպքում իրենք պատրաստ կլինեն դրանք տպագրել: Հովհաննիսյանը հավելեց, որ ուսումնասիրելու և անհրաժեշտ աշխատանքներ իրականացնելու համար իր հետ բերել է վերոհիշյալ դպրոցների 1-11-րդ դասարաններում դասավանդվող Հայոց պատմության դասագրքերը:

[Վերադառնալ](#)



ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկեան 1, ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ յարկ, Հեռ.՝ + 37460 71-00-92 Ել-փոստ՝ info@armin.am © ԵՊՀ Հայագիտական Հետազոտությունների Ինստիտուտ:



Բոլոր իրաւունքները պաշտպանուած են: Կայքը նիւթերի մասնակի կամ ամբողջական օգտագործման մեջբերումների կատարման դեպքում յղումը www.armin.am -ին պարտադիր է: